

տակից մարդկութիւնը — այդպիսի հսկայ պատասխանատուութիւնների առջեւ չի դնուած: Գիտութեան առաջադիմութիւնը, հաղորդակցութիւնների դիւրութիւնը, անթեւ հեռագիրը, սաւառնակը այնքա՞ն կրճատել են տարածութիւնը, փոքրացրել երկրագունդը, որ Աֆրիկայի կամ Գանգէսի ափին տեղի ունեցած ամենափոքր ցնցումն իսկ արձանագրուած է մեր հետաքրքրութեան վրայ այրող երկաթի գրերով: Երբեք մարդը՝ ոչ հեյլենացին, որի համար աշխարհը փակուած էր իր տեսողութեան սահմանի հետ, ոչ հոմէացին, որի համար քարտէսը մեծանում կամ փոքրանում էր պետութեան մասին կազմած իր գաղափարի հետ՝ երբեք մարդը չէ ենթարկուած այսքան հակամերժ հոսանքների, այսքան ներուժ, ամբողջական, համաշխարհային կեանքի եւ երբեք՝ այսքան դիտակցորէն պատասխանատու չէ դնուած ամբողջ մարդկութեան եւ նրա ճակատագրի առջեւ:

Արդի մարդը մեծացել է դէպի լայնութիւնը: Նրա աչքերի մէջ ներկայ են մայրենի կըղզին, Աֆրիկեան անտառները եւ ամերիկեան հսկայ շէնքերը: Նրա արիւնը արձանագրուած է հասարակածի եւ բեւեռների զարկերակը. նրա մէջ տեղի է ունենում այլեւս նոր մի երեւոյթ՝ միջքանձրկութիւն (interpe'ne'trabilite'):

Հեյլենացին, որ հիանալիորէն կարողանում էր միացնել եզրիպտական քրմականութիւնը ատտիկեան տրամարանութեան հետ, կանգ էր առել արձանի սրբարարեալ ձեւի առջեւ: Իր նայուածքի սահմանից դուրս՝ տիեզերքը կորչում էր պարապի մէջ: Անհունը ոչինչն էր — սօ մէ օն — պարզ ճարտարապետուած ոգի ունեցող մարդու թշնամին: Այսօր մեզ յայտնի է, որ հեյլենական մտքի այդ կեցուածքը տգիտութեան արդիւնք չէր, այլ իրենց աշխարհագրագումի ամբողջութիւնը պաշտպանելու համար էական մի պայման: Նրանք ուզում էին անգիտանալ անհունը, որպէսզի սահմանափակուած կեանքի ներդաշնակ ամբողջութիւնը պաշտպանեն:

Միջին Դարերում, եւրոպական մարդկութիւնը, մասամբ արեւելեան մտքի ազդեցութեան տակ, նետուեց պատմութեան մէջ եզակի արկածախնդրութեան մէջ: Նա լեցրեց եր-

կինքը մեծղի եւ զարմանալի էութիւններով, եւ Գանտէն կանգ առաւ հասարակ եւ ողբերգական տեսարանի դադարին:

Մինչդեռ, երկրագունդը մնաց առեղծըրուած:

Վերածնունդը լուսաւոր փողերի մէջ փրչեց, եւ Խտալիայի երգը դիմաւորեց զարթօնքը: Մարդը ուժգին իր ոտքերը դրաւ իրակա՞նութեան հողի վրայ: Երկինքը կենդանի մտերի գոյն առաւ եւ հրեշտակները շեփորեցին դէպի երկիր կանչող փողերի մէջ:

Նոր մարդը յառեց աչքերը իրերի վրայ եւ իր զգայուն մասներով շօշափեց նիւթը, քանդակեց արծաթը, կառուցեց շէնքերն եւ չափեց աստղերը:

Դէ Վինչին իր միտքը տարածում էր արեւելքից արեւմուտք, եւ իր ժամանակից դուրս որոնում էր դալիք դարերի միջից հսկայ համադրութիւններ, որոնք հիմք պիտի ծառայէին նոր աշխարհայացքների համար:

Դրական դիտութիւնները շօշափում են երկրի կերպընկալութիւնը, եւ այլեւս՝ բոլոր երեւոյթները ներկայանում են սահմանափակուած:

Երկինքը անհետանում է ու վեր է ածուած տարածութեան: Արդի մարդը տարածութիւնը իր գրպանի մէջն է դնում, գունաւորուած թաշկինակի նման: Նրա դիտակցութիւնը բացում է մեծ երգհնչի բոլոր խողովակները եւ արեւների շարանը՝ հրաւիրում զօրանցքի:

Ամէն ինչ չաղկապուած է:

Ճագրանտը միանում է հովուական սիմֆօնիային, սեւամորթերի քանդակները Ֆիզիասեան ձեւերին, Հիմալայեան լեռնայինների պարերը դասական պարուհիների կեցուածքին, մարինետեան Փոտուրիզմը Մոսկուայի յեղափոխականների ժեստին, ու Ստրաւլինսկու մօնօլլը ցատկոտում է աֆրիկեան բանօօի թելերի վրայ:

Ամէն առաւօտ, գաւառային ամենահամեստ օրաթերթը, պարփակուած է՝ կարծ, կտրուկ, պաղ եւ մեկնարանութիւնից զուրկ բառերի մէջ հսկայ եւ կարեւորագոյն դէպքեր: Ու նրանք, որոնք մակարոյժ անտարբերութեամբ մեռած չեն, ներկայ են ամենօրեայ ասպակալիպտիկ Ֆիլմի տեսարանների առջեւ եւ